ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01-ը ապրիլի 2021 թ.N 75

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Գևորգ Սամվելի Բեսալյանի դիմումը՝ իրեն կառուցապատման իրավունքով պատկանող հողամասի պայմանագիրը լուծելու մասին՝ ***որոշում եմ.***

1. Վաղաժամկետ լուծել Գևորգ Սամվելի Բեսալյանի հետ կնքված Իսահակյան փողոցի թիվ 5/51 հասցեի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 02092020-07-0158, տրված 02.09.2020 թ./ 0.0042 հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը:

2. Լիազորել Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերով գլխավոր մասնագետ Գրիգոր Հալլաբյանին սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման պայմանագիրը լուծելու համար հանդես գալու Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակում:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 Ապրիլի 2021 թվականի N76

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի /Հավելվածը կցվում է/:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ,գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. ապրիլ 01
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի
ղեկավարի 2021 թվականի ապրիլի 01-ի
N 76 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

(հազար դրամ)

Հ/Հ	Եկամուտներ, ծախսեր				Հաստատված գումարը	ավելացում /+/ պակասեցում /-/	Փոփոխված գումարը
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	Ծածկագիրը	Անվանումը	Հոդվածը			
	ԾԱԽՍԵՐ						
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	01.06.01	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	300.0	-100.0	200.0
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	01.06.01	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	500.0	100.0	600.0
3	Մշակութային միջոցառումների իրականացում	08.02.04	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	1500.0	-50.0	1450.0
4	Մշակութային միջոցառումների իրականացում	08.02.04	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	0.0	50.0	50.0

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 77

02-ը ապրիլի 2021թ.
Ք. Նոր Հաճն

ԱՊՐԻԼԻ 04-Ի՝ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Ապրիլի 04-ի՝ Սուրբ Հարության տոնի միջոցառման կազմակերպման և անցկացման համար համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4267 <Կենցաղային և հանրային սննդի նյութեր> հոդվածից հատկացնել 38000 դրամ:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանի ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

02.04.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 Ապրիլի 2021 թվականի N 78

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 59-Ա որոշման, Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի N 10 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 02-ի ուսումնասիրության ակտը, ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել սկսած յուրաքանչյուր ամսվա վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

05-ը ապրիլ 2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 5-ի N 78 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ %	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3	4
«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ		
1	Եվա Կալիյան	50	15.09.2018

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05-ը ապրիլի 2021թ. N 79
Նոր Հաճն

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասով և 56-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն և 2006 թվականի հունվարի 19-ի թիվ 139-Ն որոշումների, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 49-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականության իրավունքով պատկանող 07-006-0022-0001-ից ծածկագրի տակ գտնվող 0.0049 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ հասարակական կառուցապատման նշանակության:
2. Նոր Հաճն համայնքի սեփականության իրավունքով պատկանող 07-006-0022-0001-ից ծածկագրի տակ գտնվող հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքից առանձնացնել 0.0049 հա հողատարածք:
3. Առաջացած հողատարածքը հասցեավորել որպես ***Իսահակյան փողոց թիվ 5/54 հողամաս***:
4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության և հողօգտագործման հարցերով գլխավոր մասնագետ Գրիգոր Հալլաբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2021 թվականի N 80

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 (հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

06.04.2021թ.
ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի ապրիլի 6-ի N 80 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Գումարի չափը՝ դրամ
1.	Գայանե Բասմաջյան	70000
2.	Արարատ Ավագյան	70000

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐՀԱՃՆ<ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 81

07-ը մարտի 2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Ներսիսյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 31 հասցեում գտնվող 49ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի իրականացման թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 7860, 7861 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի № 47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Դավիթ Ներսիսյան ԱՁ-ին* (վկայական № 01Ա 085121) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 31 հասցեում գտնվող 49ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների, ծխախոտի կազմակերպման և իրականացման թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ.Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ, ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 82

07-ը ապրիլի 2021թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Ներսիսյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 16 հասցեի տարածքում գտնվող 95 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ 7863, 7864 վճարման անդորագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Դավիթ Ներսիսյան ԱՁ-ին* (վկայական № 01Ա 085121) Նոր Հաճն համայնքի Չարենցի 16 հասցեի տարածքում գտնվող 95 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-ը ապրիլի 2021թ. N 83

ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ, 2019 թվականի թիվ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն և 2005 դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ ձևափոխած բացվածքների փոփոխությունները և ներքին ձևափոխումները իրականացված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ ձևափոխումները իրականացված չեն աստիճանավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաներն ու սեփականատերերի բաժնային սեփականությունը, հիմք ընդունելով Էդգար Վազգենի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էմմա Միսակի Սարկիսյանին, Քրիստինե Վազգենի Արամյանին և Էդգար Վազգենի Արամյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ 23052018-07-0060/ բնակարանի երկու ինքնակամ ձևափոխած բացվածքների փոփոխությունները, ինչպես նաև ներքին ինքնակամ ձևափոխումները համարել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են ինքնակամ իրականացրած 2 /երկու/ բացվածքների ձևափոխության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 4632 (չորս հազար վեց հարյուր երեսուներկու) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Էմմա Միսակի Սարկիսյանին, Քրիստինե Վազգենի Արամյանին և Էդգար Վազգենի Արամյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի, Իսահակյան փողոցի, 4-րդ շենքի թիվ 15,16 հասցեի բնակարանից <<Ա/Ձ Հարություն Բելլույան>>-ի կողմից տրված բաժանման հատակագծերի համաձայն առանձնացնել առանձին հատվածներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 03301132

2. Առաջացած հատվածները հասցեավորել՝

Հ/Հ	Բաժանված մասի հերթական համարը	Բնակարանի մակերեսը /ք.մ/	Հասցե
1	*2*	*3*	*4*
1	S1 հատված	49.82	Իսահակյան փողոց, 4-րդ շենք, բնակարան 15
2	S2 հատված	36.58	Իսահակյան փողոց, 4-րդ շենք, բնակարան 16

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 Ապրիլի 2021 թվականի N 84

ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող ժամկետային զինծառայող Հովհաննես Վարդանի Խաչատրյանը 2020 թվականի սեպտեմբերի 27- ին սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ**.

1.Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող ժամկետային զինծառայող Հովհաննես Վարդանի Խաչատրյանի ընտանիքին համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 (հարյուր հազար) դրամական օգնություն

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

07 ապրիլ 2021թվական
Նոր Հաճն համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-ը ապրիլի 2021 թ. N 86
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ և 53-րդ կետերի ***որոշում եմ*** .

Հենրիկ Սիմոնի և Սիրուն Հրաչիկի Հայրապետյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 2695060 վկայական) շինությունները և 07-006-0052-0009 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասը վերահասցեավորել՝ տրամադրելով հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավ արևելյան թաղամաս, 13-րդ փողոց, թիվ 4 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը ապրիլի 2021 թ. N 87

Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Մարատ Համբարձումի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մարատ Համբարձումի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 2456567 վկայական) Ս. Ջուլֆյան թաղամասի 1-ին փողոցի 14 հասցեում գտնվող, 07-006-0005-0050 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 397.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 6.74 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Մարատ Համբարձումի Հարությունյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 404.04 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 935757 (ինը հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր հիսունյոթ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գագիկ Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 88

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4- ի N526 -Ն որոշման 4- րդ գլխի 16- րդ կետի պահանջների **որոշում եմ.**

1. Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 02- ի <<2021 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> N 22 - որոշման հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ (հավելվածը կցվում է):

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. Ապրիլի 08
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը ապրիլի 2021թ. N 89
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 21-ՐԴ ՇԵՆՔԻ 2 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88-Ն և 2005 դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ ձևափոխած բացվածքների փոփոխությունները և ներքին ձևափոխումները իրականացված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ ձևափոխումները իրականացված չեն աստիճանավանդակների կամ շենքի արտաքին պատերի հաշվին, չեն փոխվել կրող կոնստրուկցիաներն ու սեփականատերերի բաժնային սեփականությունը, հիմք ընդունելով Վարդուհի Արամայիսի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վարդուհի Արամայիսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 24022021-07-0163 վկայական) Նոր Հաճն համայնքի Չարենցի փողոցի 21-րդ շենքի 2 բնակարանը վերահաստատավորել՝ Չարենցի փողոց թիվ 21/2 հասցեով:
2. Վարդուհի Արամայիսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի հինգ ինքնակամ ձևափոխած բացվածքների փոփոխությունները՝ ինչպես նաև ներքին ինքնակամ ձևափոխումները համարել օրինական:
3. Թույլատրել փոփոխելու Վարդուհի Արամայիսի Պետրոսյանի սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Չարենցի փողոցի 21/2 հասցեի 68.86 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գործառական նշանակությունն ու այն օգտագործել որպես սպասարկման օբյեկտ (հասարակական նպատակային նշանակության):
4. Վարդուհի Արամայիսի Պետրոսյանը պարտավոր է ինքնակամ իրականացրած 5 /հինգ/ բացվածքների ձևափոխության օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900015102221 հաշվեհամարին մուծել 11580 (տասնմեկ հազար հինգ հարյուր ութսուն) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Համայնքի ղեկավար **Գագիկ Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՌՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-ը ապրիլի 2021 թ. N 90
Նոր Հաճն

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Արմեն Արսենի Աբրահամյանին տալ ավտոլվացման կետի շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Սարգիս Ջուլֆյան 2-րդ թաղամասի 5-րդ փողոցի թիվ 15 հասցեի հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՅՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2021 թվականի N 91

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 59-Ա որոշման, Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի N 10 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 09-ի ուսումնասիրության ակտը, ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել սկսած յուրաքանչյուր ամսվա վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

12-ը ապրիլ 2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի
ապրիլի 12-ի N 91 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ %	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3	4
«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ		
1	Ալեքս Հարությունյան	50	31.12.2016

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՆՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ № 92

13-ը ապրիլի 2021թ.
ք. ՆորՀաճն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արամ Վարդանյան ԱՁ-ն դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 15 հասցեի տարածքում գտնվող 42ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ №,7935 7936 անդորրագրերի դիմումատուն 2021 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *ԱրամՎարդանյանյան ԱՁ-ին* (վկայական80.963190) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Չարենցի 15 հասցեի տարածքում գտնվող 42 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13-ը ապրիլի 2021թ. N 93
Նոր Հաճն

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Լենա Ազատի Շահնազարյանի (ծնված՝ 08.03.1950թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ***՝

1. Ճանաչել Սայադ Անդրանիկի և Լենա Ազատի Շահնազարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող՝ 0.040 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխուներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ) քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային, կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 3-րդ թաղամաս, 1-ին փողոց, թիվ 23/2 հասցե:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ * 03301132

4. Նոր Հաճն համայնքի, Պարգևաշեն 3-րդ թաղամասի, 1-ին փողոցի, թիվ 23/2 հասցեում գտնվող Սայադ Անդրանիկի և Լենա Ազատի Շահնազարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման , 0.04 հա օրինական հողամասի վրա կառուցված 277.65 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել վերը նշված անձանց սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 Ապրիլի 2021թ. N 94

ՀԱՅԿ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՈՒՇ ԱՍՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 47-րդ և 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի ապրիլի 04- ի N 01/06.2//02130-2021 գրությունը ***որոշում եմ.***

1. Հայաստանի պատանիների ու աղջիկների շախմատի եզրափակիչ առաջնությանը մասնակցելու համար,ս/թ մարտի 21-29-ը կայացած ՀՀ պատանիների և աղջիկների շախմատի կիսաեզրափակիչ առաջնությունում եզրափակիչ առաջնության ուղեգրեր նվաճած Նոր Հաճնի բնակիչներ՝ Հայկ Մաղաքյանին և Անուշ Ասրյանին համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> ծախսերի տնտեսագիտական 4727 < Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից > հոդվածից տալ 30000 –ական դրամ դրամական օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սմբատյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

14.04.2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2021 թվականի N 95

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Չարենցի փողոցի 29-րդ շենքի 21-րդ բնակարանի բնակիչ Ավետիս Ալեքսանդրի Սարգսյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Ավետիս Ալեքսանդրի Սարգսյանին, հոր՝ Ալեքսանդր Հարությունի Սարգսյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

14.04.2021թ
ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-ը ապրիլի 2021թ. N 96

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի թիվ 139-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքին սեփականության իրավունքով պատկանող Սարգիս Ջուլֆյան 2-րդ թաղամաս 3-րդ փողոց, թիվ 24/1 հողամաս, 07-006-0013-0187 կադաստրային ծածկագիրի՝ /անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը 27082018-07-0036/ տակ գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.03186 հա հողատարածքից Ա/Ձ <Ստյոպա Աբգարյան>-ի կողմից տրված բաժանման հատակագծերի համաձայն առանձնացնել հողամասեր:
2. Առաջացած հողամասերը հասցեավորել՝

Հ/Հ	Բաժանված մասի հերթական համարը	Հողամասի մակերեսը /հա/	Հասցե
1	*2*	*3*	*4*
1	Հողամաս S1	0.02020	Սարգիս Ջուլֆյան 2-րդ թաղամաս 3-րդ փողոց,հողամաս № 24/1
2	Հողամաս S2	0.01166	Սարգիս Ջուլֆյան 2-րդ թաղամաս 3-րդ փողոց,հողամաս № 24/2

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15-ը ապրիլի 2021 թ. N 97
Նոր Հաճն համայնք

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով <Լիլիթ և Սյուզի> ՍՊԸ-ի տնօրենի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող <Լիլիթ և Սյուզի> ՍՊԸ-ի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Ս.Ջուլֆյան 2 թաղամասի 3-րդ փողոցի թիվ 4-6 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ շինության ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**